ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 14. **1845** ՅՈՒԼԻՍԻ 15.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դ. Անագ[1]:

ԱՆԱԳԸ արծաթագոյն ձերմակ մետաղ մըն է, որ օդի մէջ կենալով կը կապուտնայ. խիստ դիւրահալ է, կապարէն աւելի կարծր ու ծաւալական. չփես նէ տեսակ մը հոտ կը հանէ, ու ծալլելու ատեն կը չթըրտայ. աս ձայնին պատճառը՝ անագին բիւրեղաձեւ մասանցը կոտրտիլն է. ուստի որչափ որ աս չթըրտոցը սաստիկ ըլլայ, անագն ալ այնչափ աւելի զուտ կը սեպուի: Հասարակ գործածական մետաղներուն մէջ ամենէն թեթեւն է: Կապարի հետ միանալով մածոյծ[2] կ'ըլլայ. բարակ թերթերը թէ որ մնդիկով ամալկամ ընես ու ապակիի թերթերու վրայ կպցընես՝ հայլի կ'ըլլայ[3]: Կայծկելը կամ անագելն ալ ուրիշ բան չէ՝ բայց եթէ պղնձին վրայ կարգ մը բարակ հալած անագ տարածել. իսկ թանագը[4] երկաթ թիթեղ է՝ նոյնպէս անագած:

Վանգոտ անագը սեւ, անթափանց, սահուն, փայլուն, ծանր ու դժուարահալ կ'ըլլայ:

Շատ անգամ անագը ութանիստ հատուածակողմի պէս կը բիւրեղանայ, ու կրանիթներու մէջ շատ կը գտնուի: Ջրային հողերու մէջ հատիկ հատիկ ու խոշորկեկ կտորներով կը գտնուի. երբեմն ալ կարգ կարգ ու երակ երակ, որ ծառի կտրած բունին կը նմանի: Այրած օքսիտը շատ կարծր կ'ըլլայ, ու քարեր և ուրիշ կարծր նիւթեր յղկելու կը գործածուի. աս օքսիտը կը գործածուի նաև ձերմակ կիտուած ու ապակի շինելու:

Անագի հանքերու գլխաւորները Ասիայի մէջ են Պանքա կղզին ու Մալաքքա թերակղզին: Մեքսիկոյի մէջ երեւելի են Կուանաքուաթոյի ու Զաքաթեքայի հանքերը: Եւրոպայի մէջ անուանի է Անգղիային Քօռնուայլի հանքը. նմանապէս Սաքսոնիայի ու Պոհեմիայի հանքերը:

Օքսիտ դարձած անագը զտելու համար նախ կ'այրեն, ետքը ածուխի հետ մէկտեղ դնելով կը հալեցընեն, որով կ'ըլլայ մետաղական անագ:

1 Գալայ:
2 Լէհիմ:
3 Տես Ա. հատոր, երես 103:
4 Թէնէքէ: